ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1890-Ա « 10 » ապրիլի 2026թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի Հ.340-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի Հ.921-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 11-ի հ.340-Ա որոշմամբ (փոփոխությունը կատարվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի մարտի 19-ի հ.298-Ա որոշմամբ)՝ Երևանի քաղաքապետին առաջարկվել է Շինարարների փողոցի հ.23/10 և հ.23/11 հասցեներում գտնվող, Երևան համայնքի սեփականություն հանդիսացող համապատասխանաբար՝ 137.28քմ և 213.34քմ մակերեսներով հողամասերն օտարել «ՋԻԷՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ին:

Աջափնյակ վարչական շրջանում գտնվող, Շինարարների փողոցի հ.23/10 և հ.23/11 հասցեներում գտնվող, Երևան համայնքի սեփականություն հանդիսացող համապատասխանաբար՝ 137.28քմ և 213.34քմ մակերեսներով հողամասերն ընդգրկված չեն հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն, ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի՝ նշված հողամասերը գտնվում են 6-րդ գոտում: Հողամասերի ծածկագրերն են՝ 01-001-0020-0223 և 01-001-0020-0224 և դրանք ներառված են Երևան քաղաքի ավագանու 10.08.2012թ. հ.483-Ն որոշման մեջ (հողամասերի նախկին ծածկագիրն է 01-001-0020-0001)՝ տող 337:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 11-ի հ.340-Ա որոշումը.

1. Երևանի քաղաքապետի 2021 թվականի ապրիլի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 11-ի հ.340-Ա որոշման կատարումն ապահովելու մասին» հ.921-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման 1-ին կետում՝ «պետ Գարեգին Խաչատրյանին» բառերը.փոխարինել «պետին» բառով, և այն լրացնել նոր պարբերությամբ և ենթակետով՝

«Շինարարների փողոց հ.23/10 և հ.23/11 հասցեներում գտնվող, Երևան համայնքի սեփականություն հանդիսացող համապատասխանաբար՝ 137.28քմ և 213.34քմ մակերեսներով հողամասերն ուղղակի վաճառքի միջոցով օտարել (վաճառել) «ՋԻԷՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ»-ին՝ սույն որոշման ընդունման պահին գործող տարածագնահատման 6-րդ գոտու շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով /1քմ մակերեսի արժեքը կազմում է 38.290 ՀՀ դրամ/, համապատասխանաբար յուրաքանչյուր մակերեսով հողամասի համար Երևանի քաղաքապետարանի 900015211320 հաշվեհամարին (հողի օտարումից եկամուտներ) վճարելով՝ 137.28քմ x 38.290=5.256.451 (հինգ միլիոն երկու հարյուր հիսունվեց հազար չորս հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամ և 213.34քմ x 38.290=8.168.789 (ութ միլիոն հարյուր վաթսունութ հազար յոթ հարյուր ութսունինը) ՀՀ դրամ:

1.1. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին՝ հողամասերի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքների վճարումները և տեղական վճարները հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո, հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Երևանի քաղաքապետի անունից «ՋԻԷՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի հետ կնքել հողամասերի առուվաճառքի պայմանագրեր և պայմանագրերում նախատեսելով հետևյալ պայմանները.

1) ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Շինարարների փողոցի 23/1 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքից մոտավորապես 2000.0 քառ. մետր մակերեսով բնակելի տարածքի տրամադրում՝ Շինարարների փողոցի N 23 հասցեում գտնվող 3-րդ կարգի վթարային շենքի բնակիչներին վերաբնակեցնելու նպատակով.

2) Շինարարների փողոցի N 23 հասցեում գտնվող 3-րդ կարգի վթարային շենքի ապամոնտաժում՝ ընկերության միջոցների հաշվին.

3) ընկերությունը պարտավոր է իրականացնել ծրագիրն ամբողջությամբ և սույն որոշման 1-ին կետում նշված Շինարարների փողոցի N 23/10 հասցեում գտնվող՝ 137.28քմ և նույն փողոցի 23/11 հասցեում գտնվող՝ 213.34քմ մակերեսներով հողամասերի նկատմամբ ընկերության իրավունքների պետական գրանցման պահից 5 ամսվա ընթացքում ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 11-ի հ.340-Ա որոշման N 1 հավելվածում նշված բնակարանների փոխանակության պայմանագրերից ծագող իրավունքների պետական գրանցումը, իսկ նշված ժամկետում չկատարելու դեպքում՝ Երևան համայնքին վճարել տուգանք՝ 150.000.000 (հարյուր հիսուն միլիոն) դրամի չափով.

4) սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերը կարող են օգտագործվել բացառապես բազմաբնակարանային շենքի կառուցման նպատակով՝ այդ հողի նպատակային նշանակությանը համապատասխան.

5) Շինարարների փողոցի N 23 և Շինարարների փողոցի N 23/1 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցումից հետո՝ չկառուցապատվող 750 քառ. մետր մակերեսով հողամասն ընկերության կողմից բարեկարգելու, կանաչապատելու պայմանով:».

2) որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումից բխող պայմանագրերի նոտարական վավերացման, միասնական տեղեկանքներ ստանալու համար ծախսերը և այլ անհրաժեշտ վճարումներն իրականացվում են «ՋԻԷՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի միջոցների հաշվին, ինչպես նաև առուվաճառքի պայմանագրերը ենթակա են նոտարական վավերացման, իսկ պայմանագրերից ծագող իրավունքները՝ պետական գրանցման Կադաստրի կոմիտեում:

2. Սահմանել, որ սույն որոշման ընդունման պահից հողամասերի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքները հողամասերը ձեռք բերողի կողմից 15-օրյա ժամկետում չվճարվելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ